

2. ԱՃԱՌՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ» ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրատարակության հանձնելով մեծանուն հայագետ Հ. Աճառյանի՝ ինձ ուղղված նամակները «Արմատական բառարանի» տպագրության վերաբերյալ խնդիրների մասին, անհրաժեշտ եմ համարում որպես բացատրություն ասել հետևյալը.

1. Նամակներն ուղղված են ինձ, որովհետև այդ շրջանում (1907—1909) ես էջմիածնի տպարանի տեսուչն էի և կարգավորած լինելով այդ տպարանը՝ հնարավորություն էի ստեղծել այնտեղ գիտական աշխատություններ տպելու: Ինձնից առաջ Հր. Աճառյանը դիմել էր նաև այլ հիմնարկությունների և անձների՝ Իսթվի կուլտուրական ընկերության, Մոսկվայի էմինյան ժողովածուի վարչության, Պետերբուրգի գիտական ակադեմիային (Մոսկի առաջարկությամբ և միջոցով), Վիեննայի Մխիթարյան միաբանության, Փարիզի մի մասնավոր տպարանատերի: Ինչպես վկայում է Հր. Աճառյանն ինքը, գրանցից «ոմանք անպատասխան թողեցին գիմումս. մյուսները կարճ բանակցությունից հետո հրաժարվեցան: Ավելի երկար տևեցին բանակցություններս էջմիածնի տպարանի վարչության հետ, որի տեսուչն էր այն ժամանակ Նրվանդ վրդ. Տեր-Մինասյան. և թերևս հաջող արգյունք էլ տային, եթե նույն անձը շուտով պաշտոնից և աստիճանից չհրաժարեր» (տե՛ս Արմատական բառարան, է հատոր, գրեց Հ. Աճառյան, Երևան, 1935, էջ 203):

2. Հր. Աճառյանի այս նամակները առանձին կարևորություն ունեն այն տեսանկյունով, որ նրանք պայծառորեն մեր առաջ են դնում հայ գիտնականի և հայագիտական երկերի տպագրության վիճակը նախասովետական շրջանում: Այնպիսի մասշտաբի մի գիտնական, ինչպիսին էր Հր. Աճառյանը, ստիպված էր այս ու այն կողմ դիմելու, որպեսզի կարողանար տպագրել տալ իր անպուգական «Արմատական բառարանը», որ պատիվ կարող է բերել մի ամբողջ ակադեմիայի, և չնայած դրան, ամեն կողմից միայն բացասական պատասխան ու մերժում էր ստանում: Նա պատրաստակամորեն անձնական ղոհողություն էր հանձն առնում տպարանին վճարելու և նթադրյալ 2000 ռուբլի մրցանակի կեսը և աճրողը 100—120 մամուլի տաժանեի սրբագրությունը կատարելու ձրիարար և բոլոր տպագրված օրինակներն էլ տպարանի սեփականություն համարելու, այնուամենայնիվ դանաղան ձևական պատճառներով գործը ձգձգվում էր և մնում առկախ: Հայ գիտնականն առհասարակ իրեն երջանիկ կհամարեր, երբ իր աշխատությունը որևէ ձևով յույս տեսներ, դրամական վարձատրության մասին նա երազել անգամ չէր կարող:

Պրոֆ. Ե. Գ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ,

Փ Ա Ս Ա Թ Վ Թ Ե Ր

№ 1

Այսօր ստացա ճեմարանի վարչությունից մի թուղթ, որի մեջ հայտնվում է, թե մանկավարժական խորհուրդը որոշել է ինձ տալ Արմատական բառարանիս համար 2000 ուրուլու մրցանակը, պայմանով, որ մեկ տարվա մեջ աշխատությունը ներկայանա տպագրյալ: Այս նպաստավոր որոշումը, որ միանգամայն անակնկալ էր ինձ համար, վստահ եմ, որ մեծավ մասամբ պարտական եմ նաև Ձեր բարձրապատվության ջանից, ուստի պարտք եմ համարում նախ խորին շնորհակալությունս հայտնել Ձեզ:

Այժմ անցնում եմ տպագրության խնդրին: Ես խնդրել էի Ձեզ և առաջարկել, որ տպարանը իր վրա վերցնեք զրքի տպագրության գործը, հրատարակության իրավունքը և այլն՝ ստանալով ինձնից դրա համար հազար ուրլի: Այս մասին կատարված գործը հայտնի է թե՛ Ձեզ և թե ինձ: Սինոդի անկազմակերպ վիճակը և հայր տեղակալի՝ անտարբեր վերաբերմունքը այն ժամանակ մի բավարար վախճանի շհասցրին գործը, ևս ևս կասկածի մեջ էի այն բանի համար, որ մի՛ գուցե ճեմարանը մրցանակի հարցը այլ կերպ որոշեր: Այժմ որ այս կասկածը փարատված է և ես այդ կողմից միանգամայն ապահով եմ, ուստի խնդրում եմ Ձեզ, որ հաճիք նորից ձեռք առնել գործիս տպագրության հարցին: վերաբերյալ խնդիրները և տնօրինեք՝ ինչ որ արժան և հարկ է: Իմ կողմից ամեն պատրաստակամություն կա հարկ եղած ձևով նպաստելու գործին հաջողության համար: Եվ որովհետև տեսա արդեն ամառը, թե Դուք ևս ի՛նչպիսի բարյացակամությամբ և բարեհաճ վերաբերմունքով վերաբերվեցիք զրքիս հրատարակության գործին, ուստի վստահ եմ, որ այժմ ևս նույն սիրալիր ընդունելությունը պիտի անեք և գործ պիտի դնեք այն ամենը, ինչ հարկավոր է գործին հաջողության համար:

Արարատի նոր համարը դուրս չեկավ դեռ, ի՛նչ եղավ արդյոք Եղիա քահանայի² հրատարակությունը: Պարտք եմ համարում հայտնել, թե զրքի վերջում պիտի դրվի Երկու էջ անունների ցանկ, որի ձեռագիրը մոտս է. հարկ եղած ռուպեին կուղարկեմ:

Տիմոթեոսի գիրքը³ ամբողջապես կարդացի. այնքան էլ ձանձրալի գործ չէ (ինչպես կարծում էին), մանավանդ զրքի վերջին մասերում: Դուրս եկավ 70-ի շափ նոր կամ հետաքրքրական բառ, որի համար պատրաստում եմ (մեծ մասը վերջացած է) առանձին աշխատություն. «Սորազյուտ հայերեն բառեր Տիմոթեոս Կուզի հակաճառության մեջ»: Մտադիր եմ ուղարկել Հանդեսին: Փոքր բան է: Իսկ եթե ցանկալի կհամարեք, կարող եմ և ուղարկել Ձեզ. և եթե կուզեք, կարող եք առանձին հատորիկով և իբր հավելված կցել Տիմոթեոսի հակաճառության գրքին:

Հուսալով որ նամակիս պատասխանը կստանամ շուտով՝ կը հայտնեմ բարձրապատվությանդ

ԽՈՇԱՐԻ ԽԱՐԱՇԵԼԵՐԱ
Հ. Հ. ԱՆՆԻՅԱՆ

Խեմ. դպր. Ն. Նախիչևանի
8 հոկտ. 1908

№ 2

Ստացա շնորհակալութեամբ Ձեր գրած պատասխանը. այսօր գրում եմ Հ. Գալուստին⁴ և Մեսրոպ Հայր սուրբին՝ խնդրելով իրենց աջակցությունը՝ Սինոդում հարց բարձրացնելու դեպքում իմ բառարանի տպագրության գործի առթիվ։ Պարոն Զամինյանը⁶, այդ խիստ լուրջ անձնավորությունը, որ հայադիտական գործերով իսկապես շահագրգռված մի մարդ է, իմ խնդիրքով դիմել է արդեն հ. Հուսիկ վարդապետին⁷ — նույն նպատակով։ Այս երեք դիմումներից հետո հույս ունեմ, որ Սինոդում հարցը հաջողություն ունենա։ Ուստի կը խնդրեի, որ հաճեիք՝ նամակներիս տեղ հասնելը ստուգելուց հետո՝ Ձեր հարմար դատած եղանակով դիմել Սինոդին՝ բառարանիս տպագրության համար, այն պայմաններով, որ առաջարկել եմ արդեն Ձեզ (իմ կողմից կտրվի հազար ռուբլի, առանց փոխարեն օրինակներ ստանալու, դիրքը կլինի էջմիածնի լիակատար սեփականությունը, սրբագրությունը իմ վրա)։ Եթե մինչև իսկ դուք հույս էլ չունենաք, որ Սինոդում նպաստավոր որոշում կլինի, միևնույն է, խնդրում եմ դարձյալ դիմեցեք. խնդիրը ինձ համար հարկավոր է, որ պարզվի. դրական թե բացասական՝ մի կերպ պետք է լուծել, որպեսզի այլ միջոցների դիմել կարողանամ։

Եղիա քահանայի առթիվ պետք է ասեմ, որ ուղարկելու մասս անուններից անկն է, որ կը բռնե երեւի 2 էջ կամ երկու սյունակներով՝ մի էջ։ Այս մասը կարծեմ անհարմար է դնել Արարատում, ուստի կարելի է, եթե պատշաճ դատեք, տպել միայն արտատպության մեջ։ Ուստի խմբագրության մոտ գտնվածը ամբողջ է և նրանով էլ կը վերջանա։

Չգիտեմ միայն, թե արդյոք Մատթեոս հայր սուրբը⁸ ուզո՞ւմ է շարունակել Եղիայի մնացյալ մասը, թե հակառակ լինելով բանասիրական աշխատությանց՝ ուզում է այնպես կիսատ թողնել։ Այդ մասին որոշումը անշուշտ կախված է իրանից։ Միայն թե, եթե Ձեզ անհաճո չի թվիլ, հաճեիք հիշեցնել իրեն այն վարձատրության մասին, որ Բարեգին հայր սուրբը խոստացել էր ինձ և որի համաձայն էլ շարվեցավ ու տպվեցավ դիրքը։ Եղիայի վերջին մասերը լավ սրբագրված չեն և նոցա արտատպության ժամանակ, կխնդրեի, որ փորձերը գոնե մեկ անգամ՝ բարի լինեիք ինձ ուղարկելու։

Տիմոթեոս Կուզը արդեն ուղարկել եմ Վիեննա. տպելու են Ակինյանի «զեկուցում»-ի հետ մի գրքում։ Նոր կադմեցի և մի այլ գրվածք «Տիմոթ. Կուզ և ս. գրքի նորաբեր թարգմանությունը», որը երեւի պետք կլինի նորից ուղարկել Հանդեսին։

Խոնարհ հոգանոր
Հ. ԱՃԱՌՅԱՆ

1908 թ. 4 տ. 2
Ն. Նիսջ.

15 փետր. 1909
Ն. Նիսջ.

№ 3

Պարտք եմ համարում նախ և առաջ խորին շնորհակալությունս հայտնել Ձեզ այն եռանդուն ջանքերի համար, որ ցույց տվիք 'Իուք բառարանիս տպագրության գործի հաջողության համար։ Երբ դիրքը կապվի, հառաջաբանում առիթ կունենամ երախտութեք հիշելու Ձեր անունը։

Ահավասիկ Ձեր առաջարկած հարցերի պատասխանը.

1. էջմիածնում կարող եմ լինել հունիսի սկզբին. անցյալ տարի հունիսի 10-ին ազատվեցի. այս տարի կտրելի է իմ քննությունները մի քիչ առաջ դրել.

այս առթիվ խիստ օգտակար կարող է լինել ս. էջմիածնի տպարանական վարչության մի առաջարկ նամակը ուղղված մեր ղարանոցին: Դժբախտաբար այս տարի խոլերայի երկյուղը կա. շրջակա տեղերը խոլերան արդեն այժմ էլ զործում է. երկյուղ կա, որ շատ շուտ քաղաք մտնի. այդ դեպքում բնական է, որ ղարանը կը փակեն և ես կարող կլինեմ ընդ փուլթ էջմիածին անցնել:

2. Հազար ռուբլին վճարելու ձևի մասին չեմ ուզում դժվարություն հարուցանել. համաձայն եմ. միայն կխնդրեի, որ եթե կարելի է, երկրորդ վճարի ժամանակը մի քիչ էլ ուշացնեիք. իհարկե այդ միայն խնդրում եմ և եթե իրոք անկարելի է, արեք ինչպես ուղում եք և ես համաձայն եմ:

Այժմ ինձ թույլ տվեք նկատել հետևյալները. զրքի դինը գրել եք 15 ռուբլի, այդ շատ քիչ է, ավելի փոքր զրքեր այդ գնով են ծախվում. հիշեցեք Տաշյանի ցուցակը, որ ավելի հեշտ տպագրություն է և արժե 25 ռուբլի. իմ դիրքը առ նվազն պետք է արժենա Բալա ռուբլի: Այստեղից մի պարոն առաջարկեց հետևյալ խելացի ձևը. որովհետև գիրքս ունի բնգամենը 2000 էջ (ձեռագրում), յուրաքանչյուր 100 էջից կազմել մի պրակ և գինը դնել 1 ռուբլի, կան շատեր, ուսուցիչ, ուսանող, սիրող և այլն, որ 20—15 ռուբլի միանգամից անկարող են տալ. բայց մի ռուբլին ոչինչ բան է: Օրինակ առեք Դադրաշյանը, որ պրակի դրությամբ հազարավոր օրինակներ սպառեց կարճ միջոցում: Պրակի դրությամբ տպվելու դեպքում հիշյալ պարոնը հանձն է առնում քսան օրինակ ծախել միայն նախիջևանում (Դադրաշյանի բառարանը այստեղ ծախող ու տարածողն էլ նույն պարոնն էր):

Տառերի մասին.

Բառարանի տառերը պետք է ունենա երկու մեծություն. մին 10-նոց, մյուսը 8-նոց տառ:

Հայերեն 10-նոց և 8-նոց զիսատառ, սովորական բոլորգիր, շեղագիր, նոտր բավականաչափ ունիք արդեն. մնում է թուրքերեն, հունարեն, լատիներեն, եբրայերեն, ռուսերեն: Սոցա մանրամասն ցուցակը գնում եմ առանձին թղթի վրա. նշանակվածները կարելի է և շունենալ:

Այս բոլորից հետո ավելացնեմ և այն, որ ճեմարանի վարչությունը պայման է դրել, որ աշխատությունը տպված ներկայանա մի տարի հետո: Այս բանը իսպառ անկարելի է: Ես հատուկ խնդրել էի պարոն Տեսչից և ճեմարանի պատ. վարչությունից, որ երկու տարի ևս զոնե ժամանակ տան: Մինչև այսօր սակայն պատասխան չեմ ստացել: Եթե պատասխանը մնա, բնական է ես էլ չեմ կարող համարձակվիլ տպագրություն սկսելու: Ես հազար ռուբլին գոհում եմ ի նկատի ունենալով միայն մրցանակի 2000 ռուբլին. ապա թե ոչ ես ի՞նչ պես կարող եմ հազար ռուբլի նպաստ տալ տպագրության: Հուլիս 2-եր վրա է ինչպես որ հաջողեցրիք վերջապես Սինոդից ստանալ հավանություն, հուսով եմ նույնպես, որ բարի կլինեք դիմելու ճեմարան և իմ կողմից խնդրելու Տեսչին, չզլանալու 2-եր բարի աջակցությունը, որով անկասկած եմ, թե կարճ ժամանակում պատասխանը կստանամ նպաստավոր ձևով: Առանց այս պատասխանին ինձ դժվար, շատ դժվար կլինեք համաձայնել: Սպասելով թե՛ այս թղթին և թե՛ տպարանի նոտարական պայմանագրության՝

Խոնարհ հարգանքով Հ. ԱՃԱԹՅԱՆ

Արմատական բառարանում գործածվելիք տառերի ցուցակը (առանձին թերթի վրա)

1. Հայերեն սովորական տառեր .Ն 10	7. Երբայերեն .Ն 16
2. Հայերեն շեղատառ .Ն 10	8. Ռուսերեն .Ն 10
*3. Հայերեն նոտր .Ն 10	9. Հայերեն սովորական տառեր .Ն 8
4. Թուրքերեն .Ն 10	* 10. Հայերեն շեղատառ .Ն 8
5. Հունարեն .Ն 10	11. Հունարեն .Ն 8
6. Եվրոպական տառեր .Ն 10	12. Եվրոպական տառեր .Ն 8

*Նշանակվածները անհրաժեշտ չին և եթե չլինեն էլ, կարելի է հարմարվել՝ Ամենիդ շատ գործածական տառերն են հայերենն ու եվրոպական տառերը. մյուսները սակավադեպ։

Եվրոպական տառերի ամբողջ այբուբենը հետագայն է, որ անհրաժեշտ է ամբողջապես ունենալ։

a, a, a, a, ä, a, á, b, c, ç, č, c, d, e, ē, ē, é, è, e, ē, l, g, h
h, i, i, i, í, i, j, j, k, l, l, m, m, n, n, n, o, ö, ò, ò, ó, o, q,
p, q, r, r, r, r, s, š, š, t, t, u, ü, ü, ü, ü, v, w, x, y, y, y, z, ž:

Բացի սոցանից հարկավոր են այս նշանները. = * < — — —

Պետք է ունենալ նաև ^c նշանը, որպեսզի հարկին կարելի լինի կադմել
ä, i, b^c, t^c, և այլն տառերը։

Ծան. Այս երեսին վրա նշանակած տառերն ու տառանիշերը պետք է ունենալ թե .Ն 10 և թե .Ն 8 մեծութամբ։

№ 4

1909, ապրիլ 13

Ն. Նախչևան

Ստացա Ձեր երկրորդ գրությունը, որով համաձայնվում եք տալու ևս 3—4 ամսվա ժամանակ՝ վճարելու համար բառարանիս երկրորդ վճարը։ Շնորհակալ եմ։

Նշանակած տառերը բոլորն էլ անհրաժեշտ են. ավելորդները՝ ավելի ճիշտ խոսելով ոչ-անհրաժեշտները՝ արդեն մատնանիշ եմ արած նախորդ նամակումս։

Ինձ համար դժբախտաբար մի կետ միայն մնում է չլուծված. տպագրության ժամանակի խնդիրն է այնու Ասում եք, թե ձեմարանի տված որոշումը (մի տարուց ներկայացնելը) ձևական է միայն, բայց ձեմարանի և էջմիածնի դրությունը ծանոթ է Ձեզ, գիտեք, որ այնտեղ ոչինչ չկա տևական. այսօր եթե այնտեղ բաղմել է մի անձ՝ որ իր անշահախնդրությամբ և անաշուկությամբ նպաստավոր դիրք է բռնում ինձ համար (պր. Բերբերյանը), ո՞վ կարող է երաշխավորել, թե ինչ կլինի հաջորդ տարի. արդյոք կմնա՞ նույն վարչությունը և մի հաջորդ վարչություն՝ հակառակ դիրք բռնելով՝ չի՞ կարող արդյոք ձևական որոշումը իրականի վերածելու նույնպես և տպարանը. եթե այսօր այնտեղ եք Դուք, որ բարյացակամությամբ և անձնվիրաբար աշխատում եք ինձ համար, — պիտի մնա՞ արդյոք միշտ նույնը՝ նորընտիր հայրապետը, որ ահա շուտով գալու է, արդյոք չի՞ աշխատելու ավելի բարձր պաշտոնների կոչել Ձեզ (առաջնորդություն, թեմական ընդհանուր տեսչություն և այլն), և այս դեպքում արդյոք

նոր նշանակվող անձը շարունակելու է Ձեր գործը: Այս պայմաններում հարկավոր էր, որ ես ստանայի ձեմարանից երեք տարվա պայման: Այս մասին ես արդեն գիմել եմ ձեմարան և առանձին (երկրորդ անգամ լինելով) գրությամբ խնդրել: Դիմել եմ նաև իմ բարեկամ պր. Արեղյանին, որպեսզի աշխատեր հաջող ելք տալու գործին: Դիմում եմ նաև Ձեզ, այս վերջին խնդիրքս էլ անելու, որ Դուք ես աշխատեիք ստանալու հիշյալ եռամյա պայմանաժամը, որով միայն վստահություն պիտի ունենամ առաջին քայլերս անելու: Հենց որ ստացա հիշյալ որոշումը՝ կուղարկեմ Ձեզ 500 ռուբլին և Դուք իհարկե ընդ փուլով կշտապեք բերել տալու պակաս տառերը: Ձեմարանի որոշումը հարկավոր է, որ խիստ շուտ լինի, որպեսզի ժամանակ մնա իմ ուղարկելու գումարս Ձեզ հասնելու, ինչպես և Ձեզ էլ ժամանակ մնա պակաս տառերը բերել տալու: Շտապենք, որովհետև մայիսը մոտ է: Եթե տպարանդ կարելիություն ունենար այժմեև հանձնարարելու պակաս տառերը՝ հունիսին անշուշտ կարելի կը լիներ սկսել տպագրությունը:

Խոնարհ հարգանք և շնորհակալությամբ

Հ. ԱՃԱՌՅԱՆ

Ծ Ա Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Տեղակալը այն ժամանակ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյանն էր, հետագայում Գեորգ V Սուրենյան կաթողիկոսը:

2 Խոսքը վկայաբանական մի գրվածքի մասին է, որ Հր. Աճառյանի աշխատությամբ տպագրվում էր էջմիածնի պաշտոնական «Արարատ» ամսագրում:

3 Տիմոթեոսի գիրքը — Խոսքը Ալեքսանդրիայի V դարի երկրորդ կեսի պատրիարք կամ եպիսկոպոսապետ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» գրքի մասին է, որ հրատարակվեց 1908 թ. իմ և Կարապետ վ. Տեր-Մկրտչյանի աշխատությամբ և Սուրիաս արքեպիսկոպոս Պարդյանի զրամական օժանդակությամբ:

4 Հ. Գալուստը՝ Գալուստ Տեր-Մկրտչյանն է, Միաբան ծածկանունով, նշանավոր հայ բանասերներից մեկը XIX դարի վերջում և XX դարի սկզբում: Գրել է բաղմաթիվ ուսումնասիրություններ է. Կիսական հողվածներ, ունի արժեքավոր հրատարակություններ («Գիրք հերձուսածոց», «Վկայք Արևելից», Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց (Ստ. Կանայանի հետ միասին), Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց (Ստ. Մալխասյանի հետ), Շապուհ Բագրատունի (Մեսրոպ Տեր-Մովսիսյանի հետ) և այլն:

5 Խոսքը անվանի հայ բանասեր Մեսրոպ վ. (հետագայում եպիսկոպոս) Տեր-Մովսիսյանի, Մազիստրոսի մասին է:

6 Արքանամ Չամիչյան. ձեմարանավարտ, հայոց լեզվի և գրականության բաղմաժյա ուսուցիչ Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցում: Հրատարակել է հայոց եկեղեցու պատմություն և հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն:

7 Հուսիկ վարդապետ Զոհրաբյան, ձեմարանի ուսուցիչ և Սինոդի անգամ, Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի ժամանակ երկար տարիներ հայրապետական դիվանի դիվանապետ, հետագայում արքեպիսկոպոս և Թումանիայի առաջնորդ:

8 Մատթեոս վրդ. Մատթեոսյան. «Արարատի» խմբագիր նշանակվեց Գարեգին վրդ. Հովսեփյանի (հետագայում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս) պաշտոնանկությունից հետո, որ տեղի ունեցավ 1908 թ. վերջին իմ «Հայոց եկեղեցու վերանորոգության խնդիր» հոդվածը «Արարատում» տպագրելու պատճառով: Այդ հոդվածը պոկվեց հանվեց «Արարատի» 1908 թ. հոկտեմբերի համարից և հրապարակով հրկիզվեց էջմիածնի տպարանի շենքի առջև:

9 ձեմարանի տեսուչը 1907/08 և 1908/09 ուս. տարիներին Մինաս Բերբերյանն էր, որ շատ բարյացակամ էր տրամադրված Հր. Աճառյանին, հատկապես «Արմատական բառարանի» տպագրության խնդրում:

ПИСЬМА Гр. АЧАРЯНА
ОБ ИЗДАНИИ «ЭТИМОЛОГИЧЕСКОГО СЛОВАРЯ»

Проф. Е. Г. ТЕР-МИНАСЯН

(Р е з ю м е)

Публикуемые четыре письма крупнейшего лингвиста-армениста Грация Ачаряна, адресованные автору этих строк Ерванду Тер-Минасяну, бывшему в 1907—1909 гг. заведующим Эчмиадзинской типографией, показывают, в каком тяжелом положении находились тогда наука и ученые. Чтобы издать свой труд «Этимологический словарь армянского языка», Ачарян безуспешно обращался в Бакинское культурное общество, в Правление Московского армянского сборника «Эминян», в Петербургскую Академию наук (по предложению акад. Н. Я. Марра и через его посредство), в конгрегацию мхитаристов в Вене и т. д. Эти учреждения либо вовсе не отвечали на его письма, либо отказывались помочь ему в этом крайне важном деле.

Издание указанного ценного труда стало возможным лишь в советское время.